

էիւ Անտուառ ու Հաւատարմի՝ Աստուած, Դու
զօրացուր մեր հաւատը՝ ինչպէս երբեմն մար-
գարէին։ Թող Զո խօսքը մեր սիրտն ևս վա-
ռէ իրրեւ հաւր և բորբոքէ մեր ոսկորները,
և մենք նոյնպէս կարող լինինք այս դառն
տաղնապի մէջ Զո մերձաւորութիւնն զգալ և
եռանդուն յուսով կրգել բարձրաձայն. «Օրհնե-
ցէք զՏէր, զովեցէք զԵսա՝ զի փրկեաց զանձն
անանկի ի ձեռաց չարաց»։ ամէն։

Կ. Վ.



ՀԱՐԵԶՆԵՐԻ ԻՐԻՑԻ ՄԻ ՀԻՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ, ԲՆՈՐԻՇ ԳՕԵՐԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱԿՈՒԹԻՒՆԸ, *

Հարեշների եկեղեցին քոյր է Ղապիների
(կապուների) եկեղեցուն։

Մինչև այսօր իսկ Հարեշների եկեղեցու առա-
ջին հոգևորական զուլիը՝ «արուանն»՝ որի ամուսն
Վոնդարումն է։ Ղապիների «Աղէքսանդրիոյ պատ-
րարքից» (Գահրէէում նստող) ձեռնադրուած մի
Ղապի է։

Հարեշների եկեղեցու եգիպտականի հետ ու-
նեցած այս կապը շատ հին է։ սկսած այն ժամա-
նակուանից, երբ եգիպտական եկեղեցին զուտ կոպ-
տական չէր, այլ գտնուելով Հռոմէական պետու-
թեան արեւելեան կիսում՝ մեծ քաղաքների և
ստորին Եգիպտոսի մէջ ներկայանում էր իրրեւ մի
մաս Հռոմէական պետութեան արեւելեան յու-
նիստ րաժնի եկեղեցու։

Քրիստոնէութեան ծագումը Հարեշաւանում
(Եթովպիայում)՝ տեղական աւանդութիւնը կա-
պում է։ մանուկ հասակից մեզ ծանօթ, Եթովպացու
հետ, որ էր շնորհիւ հզօր Վոնդակայ տիկնոջ
Եթովպացուց և որի դարձը Փիլիպպոս աւետա-
րանչի ձեռքով պատմուած է Գործք առաքելոցի
մէջ (Ը. 22)։ Սակայն որքան անկասկածելի է «Ներ-
քնու» դարձի պատմութիւնը, նոյնքան պէտք է ան-
հիմն համարել նրա հետ կապած աւանդութիւնը,
թէ Գ. դարից առաջ Եթովպիայում քրիս-

տոնէութիւն եղել է։ վստահելի հետքեր չկան,
Այդ դարում Քրուսնտիոս անունով մէկը Եթով-
պիոյ առաքեալ է դարձել։

Արեւմտեան եկեղեցու պատմիչ Ռուփինոսը
(+410) պատմում է, թէ Քրուսնտիոսը Տիւրացի էր
և թէ մի անգամ իր եղբայր Եգեսիոսի և հօրեղբայր
Մերոպիոսի հետ Վարմիր ծովի վերայ ճանապարհոր-
դելու ժամանակ եթովպիական ծովափերի մօտ նա-
ւարկութեան է ելած արկուում և գերի ընկնում ե-
գերաւանակ վայրենիների ձեռքը, որոնք նրա ուղեկից-
ներին սպանելուց և գերի վարելուց յետոյ, նրան
և Եգեսիոսին տանում են թագաւորի պալատը Աւ-
քսումիս (Աքսումի ոչ հետու դէպի արեւմուտք Ադ-
ուայից)։ որ այն ժամանակ թագաւորութեան մայ-
րաքաղաքն էր։ Այստեղ Չ եղբայրները թագաւորի
շնորհը վայելելով անարգել քրիստոնէութիւն են
տարածում։ Եգեսիոսը մի փոքր ժամանակից յետոյ
վերադառնում է Տիւրսու իսկ Քրուսնտիոսը մեծն
Աթանասից Աղէքսանդրիայում եպիսկոպոս ձեռնա-
դրուելով, մինչև իւր կեանքի վերջը մնում է Ե-
թովպիայում հիմնած եկեղեցւոյ գլուխ։

Ռուփինոսի ասելով, ինքն այս տեղեկութիւն-
ները առել է նոյն իսկ Եգեսիոսից։ սակայն եթէ
այդ ստույգ էլ համարենք, պէտք է որ նա մանրա-
մասնութեանց մէջ զարգարած լինի։ Այսքանը որոշ
է, որ Քրուսնտիոսը 357-ից շատ առաջ Աքսումում
Աթանասից եպիսկոպոս էր ձեռնադրուած։ Ինքն
Աթանաս պահել է մեզ 357-ին Վոնտանդիոս կայ-
սեր գրած մի նամակը, որի մէջ նա յորդորում է
Եթովպիոյ տիրապետներին «չարաբարոյ» Աթանասի
(Աթանաս այն ժամանակ արիոսական կայսրից աքսոր
էր ուղարկուած) ձեռնադրած Քրուսնտիոսին նորից
օծուելու և լաւագոյն հրահանգման համար ուղար-
կել Աղէքսանդրիա, ուր ամուսնացւում էր մի արի-
ոսական եպիսկոպոս։

Հարեշների եկեղեցու եգիպտականի հետ ու-
նեցած յարաբերութիւնը առաջին պատմութեան
համար խիստ կարեւոր նշանակութիւն է ունեցել,
Եգիպտական եկեղեցին 451-ից սկսած իւր միաբնակ
լինելուն համար կղզիացաւ պետական եկեղեցու մնա-
ցեալ մասից, իսկ Յուստինիանոսի օրով (527—565)
բոլորովին թափանուեց նրանից (որ այն ժամանակ
կայսերական եկեղեցի էր կոչում) և շնորհիւ
մահմեդականների Եգիպտոսին տիրապետելուն (մօտ
640) կարողացաւ պահպանել իւր անկախութիւնը.
հարեւական եկեղեցին իւր մայր եկեղեցու հետ միա-
սին այսպիսով միաբնակութիւն ընդունեց։

Ահա այսպէս աստիճանաբար յետ մղուեց
յուճական տարրը եգիպտական միաբնակ եկեղեցուց։

* Այս յօդուածը Christliche Welt թերթից (1896-
N. 15) փոխադրել է իմ օգնութեամբ Գեորգեան ընտանա-
նի Գ. Լաւրանի ուսանող Յ. Թովիշեան։ Հեղինակը ուսուց-
չապետ Լոօֆս, երբեք մասնիկ էր քաժանել այն. այստեղ
այս է տեսնում երկրորդ մասը, իսկ երրորդը այս կտես-
նել յաջորդ համարում։

մանաւանդ Հարեշտանում Եռնական եկեղեցու ազդեցութեան անկման զուգընթաց կերպով զօրեղացաւ 2 եկեղեցիների մէջ աղգայնական ոգին, որ և պատճառ եղաւ նոցա առանձնայատկութեանց:

Հարեշական եկեղեցու առանձնայատկութիւնները լաւ հասկանալու համար ինկատի պէտք է ունենալ 2 հանգամանք. մի կողմից հին արեւելեան եկեղեցու հետ զուգընթաց մինչև 2-րդ դար ունեցած դարգացումը, միւս կողմից այն, որ նա այդ ժամանակուանից ի վեր պահպանելով տեւական կապակցութիւն կոպտական եկեղեցու հետ, աւելի քան 1600 տարուայ ինքնուրոյն աղգային զարգացումն է ունեցել:

Առաջին հանգամանքը մոլորեցրել է մի քանի պարզամիտ բողոքականներին հաշակելու, թէ հարեշական ինչպէս և կոպտական եկեղեցուց, այնպիսի նախնականութիւն է չնշում, որ նոյն իսկ արեւելքի հիւսիսային կողմի եկեղեցիներից ոչ մէկի մէջ գրտնել չէ կարելի: Արդարեւ Հարեշները չեն ննթարկուում հոռի կախկոպութիւն, հաղորդութեան բաժակը չեն արգելում 7 խորհուրդներին, դոյափոխութեան և քաւութեան թղթերին ծանօթ չեն, 2-դ դարուց յետոյ այն ամենը ինչ որ յառաջ է եկել արեւմուտքում կամ պետական եկեղեցւոյ յունական կիսում, չէր կարող Հարեշտան մուտք գործել: Ինչպէս արեւելքի միւս բոլոր եկեղեցիներում, նոյնպէս և Հարեշտանում ճաշակուում են «2 տեսակներով» ևս. թէև ունին հռոմէական խորհուրդների համապատասխան եկեղեցական արարողութիւններ, լայց պակաս է այստեղ արեւմտեան հասկացողութեան համաձայն խորհուրդի գաղափարը: Այս սովորութիւնները հարկաւ աւելի հնաւանդ են, քան այն, ինչ որ ընդունում են կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների մէջ, լայց այդ «նախնականութեան շունչ» համարել անտեղի է:

Ինչպէս երևում է վաղ արդէն աշխատել են այստեղ բրիտանեութիւնը աղգային և դիւրամբունելի դարձնել: Ս. Գիրքը և պաշտամունքի վերաբերեալ գրքերը գործ են ածում մինչև այժմ եթովպիական լեզուով, որ այն ժամանակ աղգային լեզու էր, թէև ոչ այժմ: Քահանաների սեղանի վերայ երգածը ներկայումս նոյնչափ անհասկանալի է ժողովուրդի համար, որչափ կոպտական և ասորական յակորիկ եկեղեցիներում: Լայց ոչ մի ճանապարհորդ չէ յիշում, որ գոնէ Աստուածաշնչի հատուածները պաշտամունքի միջոցին հասարակաց լեզուով կարդացուէին, ինչպէս այդ տեղի է ունենում օր. Ասորի Եակորիկների և մասամբ Ղպտինների մէջ: Նոցա պատմելով, հոգեւորականներն անգամ

հին եթովպիական լեզուից հաղիւ միայն տառերը ճանաչեն և քիչ բառեր հասկանան: Այս կողմից ևս նա նման է ասորական եկեղեցիներին: Իսկ նորա վերայ նկատուող կզակի աղգային առանձնատկութիւնն է եկեղեցական սովորութեանց և առասպելապատում աւանդութիւնների զօրեղ երրայական գրոշմը: Թլիսատկութիւնը, որ գործ է դրուում Հարեշտանում կայ արդարեւ և՛ զպտինների մէջ, դա երեւի մի շատ հին ժողովրդական սովորութիւն է աւելի քան եկեղեցական ծէս: Բայց և ուրիշ Հին կտակարանի յատուկ արարողութիւններ, ինչպէս օր. դանաղան մաքրութեան օրէնքների պահպանութիւնը, առանձնայատուկ չէ միայն հարեշներին և գտնուում է նաև արեւելքի միւս եկեղեցիներում և բացատրուում է այնպիսի հանգամանքներով, որոնք արդէն Դ. և Ե. դարերում ընդհանուր պետական եկեղեցւոյ մէջ նկատելի էին: Սակայն հրեութեան կամ Հին կտակարանի հայեցողութեան ազդեցութիւնը հարեշների եկեղեցու վերայ աւելի ընդարձակ է և նորա առանձնատկութիւնն է կազմում բաղդատմամբ նաև կոպտական մայր եկեղեցու հետ: Բոլոր քրիստոնեաներից միայն հարեշներն են, որ թէ կիրակէն և թէ շաբաթը տօնում են: Իրենց կերակրի մէջ չափազանցութեան հասցրած խտրութիւն են գնում նոքա՝ սուրբ և անսուրբ կենդանիների վերաբերմամբ: Իսկ թէ ինչքան մեծ է հրեական ազդեցութիւնը կրօնական զրոյցների վերայ՝ գաղափար կարելի է կազմել նրանցից, որ Աքսոււմի մայր եկեղեցւոյ կառավարիչ՝ Ներբեիդը հաւատում է, թէ ուխտի տապանակը մինչև այսօր պահուած է իւր եկեղեցու մէջ:

Երբ Գերհարտ Ռօլֆս 1881-ին Վիլհելմ կայսեր յանձնարարութեամբ իւր պատգամաւոր ճանապարհորդում է Հարեշտան, խօսակցում է Ներբեիտի հետ այս զրոյցի մասին: Նա այնպիսի զուարճալի ձևով է պատմում այդ խօսակցութիւնը, որ ես աւելորդ չեմ համարում մէջ դնել այստեղ:

«Եւ հարցին, թէ նա (Ներբեիտը) Երուսաղէմում եղել է, նա պատասխանեց. Ուրեմն Դուք չգիտէք, թէ հենց այս րոպէին (Ներբեիտը Ռօլֆսին եկեղեցու մէջ ընդունեց) գտնուում էր նոյնպիսի սրբազան տեղում, որպիսին է և Երուսաղէմը: ... — Ես այդ յիրաւի չգիտէի ... — Ուրեմն դուք չգիտէք, թէ այս եկեղեցին, որի նուիրական կամարների տակ այժմ գտնուում էք, մեր Փրկչի հայրը Յովսէփին է կառուցել: — Ես ՀՀամարձակուեցի իմ աղիտութիւնս խոստովանել, այլ պատասխանեցի, Ես յիրաւի լսել եմ այդ, լայց չգիտէի որքան ստոյգ է: — Այո՛, ասաց նա, այստեղ, հենց այս վայրում

կանգնել է սուրբ Կոյս Մարիամը իւր Քրիստոս որդու հետ, երբ սրբազան ընտանիքը Եդիպոսոսից դաւիւ է և Յովսէփը ի յիշատակ այդ փառաւորան իւր սեփական ձեռքերով անտեսանելի հրեշտակների օգնութեամբ կառուցանում է այդ եկեղեցին, որի մէջ մենք գտնուում ենք այժմ—Որովհետեւ ևս այլ ևս ոչ մի առարկութիւն չարի, բնականաբար ներքեիտը հաւատաց, թէ ևս ևս համոզուեցի նորա խօսքերի ստուգութեան, ինչպէս ինքը և ներկայ եղող քահանաները։ Ես այժմ թող տուի ինձ հարցնելու, թէ այն Ուխտի տապանակը, որ Մենելիքը՝ Սաբա զխոյի և Սողոմոնի որդին (!), իւր Երուսաղէմի տաճարից դէպի Հաբեշտան փախուելու ժամանակ բերել է (դա մի հաբեշական աւանդութիւն է), անշուշտ է մտացել արդեօք մահմադականների եկեղեցին այրելու միջոցին։— Ինչպէս կարող էք այդպիսի բան հարցնել, պատասխանեց ներքեիտը, երբ Մահմադէտ Գրանին եկեղեցին այրում էր Ուխտի տապանակը ծածկուեցաւ նրա աչքից, Աստուած թող չէ տալիս ոչ մի անհաւատի այն տեսնել։— Ուրեմն ուխտի տապանակը դեռ այստեղ է և ինչպէս առաջ նշեցէս և այժմ միայն ֆալաշներին (Հաբեշտանցի հրէայ) է երևում։— Ո՞վ է պատմել ձեզ այդ առասպելը։— Ես այդ կարգացել եմ, պատասխանեցի։— Դուք միայն դիտեք այն, ինչ որ տգէտ մարդիկ ճանապարհորդներին հաղորդում են, ճշմարտութիւնը միայն յայտնում է նա, ում ձեռքն է ճշմարտութիւնը, Մենք Ամենաբարձրիայի ծառաներս այդ գանձի տէրն ենք, ճշմարիտ Ուխտի տապանակը անտարկոյս այստեղ է և ոչ թէ նորա նմանութեամբ շինուած սովորական մէկը, որպիսին կարելի է եկեղեցիների ներքին մասում (որբութիւն սրբոցի մէջ) տեսնել, նա գրուած է այս եկեղեցու պատերի մէջ և միայն մեզ ծանօթ մի գոնակով կարելի է այնտեղ մտնել։— Թող կ'որոշի արդեօք ինձ, սրբազան հայր, Աստուծոյ և իւր ըտրեալ ժողովուրդի դաշնագրութեան հին և սրբազան յիշատակարանը տեսնել։— Անկարելի է, ոչ կայսրը, ոչ էշէգէն (հաբեշական կրօնաւորների գերագոյն պետը) և ոչ իսկ արուսնան չեն կարող գտնէ մի անգամ տեսնել ուխտի տապանակը, նորա չին կարող նորա տեսքը տանել։— Մեկայն, Տէր Քահանայապետ, թողյա՞րքու՞մ է արդեօք եկեղեցու մնացած հոգեւորականներին տեսնել Տապանակը։— Ոչ, միայն ինձ, որ նրա պահապանն եմ և իմ յաջորդիս, երբ ևս մեռնեմ, Այսպէս է եղել հաջորաւոր տարիներից ի վեր և այսպէս պէտք է լինի մինչև ցյաւիտան։— Բայց եթէ Աստուած իւր անքննելի նախասահմանութեամբ շեր կեանքը յանկարծակի բառնայ, ինչպէս պէտք է նոր ներքեիտը Ուխտի տապանակի խորհրդաւոր անցքը գտնէ։— Ես այնչէք այս

տեղ, ասաց նա և խելոյն իւր զղեստի միջից դուրս հանեց կապոյտ մետաքսէ թելից կապած մի արծաթէ տուփ։— այս տուփը կրել էր ինքը Մովսէսը, Ահա սրա մէջն է իմ կտակս կամ աւելի ճիշտ այն գաղտնիքը, թէ ի՞նչպէս պէտք է գտնել այն սենեակի մուտքը, ուր գտնուում է Ուխտի Տապանակը։— Դուք ուրեմն, Սրբազան Քահանայապետ, Մովսիսի օրինաւոր յաջորդն էք և մանաւանդ աւելի մեծ քան նա, որովհետեւ դուք Քրիստոսի պարզանքներից մասն ունեւիք։— Այս խօսքերը ներքեիտին մեծ բաւականութիւն պատճառեցին։— Ասեցիք, իմ սիրելի պաշտօնակիցներ, ինչ որ օտարականն ասում է, ի նկատի առէք նորա խօսքերը, նորա լի են ներքին ճշմարտութեամբ և մտածել են տալիս։

Հրեական հայեացքների այս զօրեղ ազդեցութիւնը պատճառ է եղել այդ եկեղեցուն նախնականութեան շուրջ վերադրելու և հաբեշական քրիստոնէութիւնը ժամանակների հրեայ քրիստոնէութեան հետ կապելու, Այդ կարծիքը սխալ է անկասկած, Հարաւր սուրբ պահել յատուկ սովորութիւն էր Հաբեշտանում մինչև ԺԵ-դ դար այսպէս կոչուած Եւստաթեան կրօնաւորներին միայն, Առաջին անգամ Զարա Յակոբ թագաւորի (+1468) հրամանով դա ընդհանուր սովորութիւն դարձաւ և ուրեմն ոչ թէ հնադարեան աւանդութիւն այլ ուշ ժամանակի ազդեցութեամբ առաջ եկած մի ծէս է, ևս այն, ինչ որ այս կէտում հաւաստի է, միւս հրեամիտ աւանդութիւնների և սովորութիւնների նկատմամբ ևս հաւանական պէտք է համարուի, Հաբեշների եկեղեցու հրեացումը ազգային պատմութեան ընթացքում յառաջացած մի առանձնայատկութիւն է միայն։

Հաբեշների եկեղեցու մի ուրիշ առանձնայատկութիւնը, որ պատմական կապ ունի հրեական ազդեցութեան դարգանայուն հետ, զանազան կրօնաւորական կարգերի գոյութիւնն է, Թէև Անտօնեան և Եւստաթեան կրօնաւորների մէջ մի ժամանակ եղած զօրեղ հակառակութիւնը այժմ գրեթէ վերացել է, բայց Չ կարգերն ևս կան դեռ այսօր, Միայն թէ Անտօնեան կարգի կրօնաւորների նախկին առաջնորդ Էշէգէն ներկայումս հաբեշական կրօնաւորութեան ընդհանուր ղեկավար է, իսկ այդ հաբեշների եկեղեցու այնպիսի մի առանձնայատկութիւն է, որ միւս արեւելեան եկեղեցիները չունին։

Հաբեշների եկեղեցու մի առանձնայատկութիւնն համարուում է յաճախ և այն, որ նա 81 կանոնական դրբեր է ընդունում, Յունական Աստուածաշնչի դրբերը (65—78, նայած թէ ինչպէս են հաշուում), մի շարք հրեական և քրիստոնէական

տարականոն գրուածքներ (օր. Ենովքի Գիրքը, Կու-
ֆայէ՝ կամ այսպէս կոչուած յորեւեանների
գիրքը) և մի ժողովածու եկեղեցական կանոնների, Սա-
կայն թէև միւս եկեղեցիների մէջ նման հաշիւ չենք
գտնում, բայց նոյն իսկ 81 զբքերի զանազան կերպ
հաշուելը ցոյց է տալիս, որ այդ թիւը միշտ հաս-
տատուն չէ եղել և գուցէ ուրիշ տեղից է մուտք
գործել:

Յամենայն դէպս անիրաւացի է հարեշական ե-
կեղեցու մի խոտելի առանձնայատկութիւն համա-
րել նաև այն, որ իբր թէ նա կրկնակրտութիւն է
ընդունում: Մկրտութեան տօնը, որ պատճառ է
եղել այս թիւերիմացութեան, նման ձևով տօնուում
է նաև Ղպտիների և Յակորիկների մէջ և համա-
պատասխան է օրթոդոքս եկեղեցու կատարած
«Չրօրհնաց» հանդիսին:



ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ:

Սկսած այն ժամանակից, երբ մատե-
րիալիզմը (նիւթապաշտութիւնը), մանաւանդ
անգլօֆրանսիական պոզիտիվիզմի (դրական
փիլիսոփայութեան) կերպարանքով հասարա-
կութեան աւելի և աւելի հեռաւոր խաւերի
մէջ մուտք է գործում՝ Գերմանիայում երբեք
պակաս չեն եղել այս աշխարհայեցողութեան
դէմ բողոքող ձայներ: Թէ ընդհանրապէս գի-
տութեան և թէ մասնաւորապէս կրօնի ա-
նունով: Զարմանալի չէր սակայն, որ այդպէս
լինէր Գերմանիայում զաղափարականութեան
հին հայրենիքում: աւելի հետաքրքիրն այն է,
որ ֆրանսիայում՝ ԺԸ, դարու չորսակաների Ղե-
մարիները՝ մատերիալիզմի ու Էնցիկլոպիդիստ-
ների և ԺԹ, դարու պոզիտիվիզմի հայրենի-
քում առաջնակարգ գործիչներ վկայում են
այժմ և ողջունում զաղափարականութեան
հետզհետէ վերակենդանանալը: Խօսքը նո-
րութիւնների ետեւից ընկած մի սովորական հե-
ղինակի մասին չէ, այլ ակադեմիայի անդամ
Բրունըրտիերի մասին, որ արդէն իւր Բոսսուէ-
տի վրայ կարգացած դասախօսութիւններով
և վճռէրով ոգևորողների նկատմամբ բռնած
դիրքով ցոյց էր տուել, թէ ինչպէս խաղաղ
գիտէ գիտել ժամանակի զարգացումը և անու-

շաղիւր թողնել օրուայ հերոսների աղաղակը:
Իւր նորերս լոյս տեսած La Renaissance de
L'idéalisme (Պաղափարականութեան վերածը-
նութիւնը) գրքի մէջ Բրունըրտիեր պնդում է,
որ վերջին տարիներում իշխող մատերիալիզ-
մին զուգընթաց և իբրեւ մի դանդաղ հակա-
ռակ հոսանք՝ կարելի է գաղափարականութեան
կրկին արթնանալը նկատել, և այն ոչ միայն
գիտութեան, այլ նաև արուեստի և գրականու-
թեան, մինչև իսկ քաղաքականութեան շրջա-
նում:

Բրունըրտիեր ներկայացնում է այդ գաղա-
փարականութիւնը գիտութեան մէջ իբրեւ
դատութիւն իրողութիւնների այն բանութիւ-
նից, որոնք ամեն ժամանակուայ մատերիալիզ-
մի, ինչպէս նաև այժմ անցրած պոզիտիվիզ-
մի տեսակէտով միակ ճշմարիտն են: Հակառակ
պոզիտիվիզմի, որի համար ամեն չհաշուած,
չկշռուած, չչափուած, զգայութիւնների ներ-
քոյ չընկնող ինչ ենթադրական է և խաբուսիկ,
զաղափարականութեան ներկայ վերածնութիւ-
նը յառաջ է բերում հետզհետէ այն համո-
զումը, թէ իրողութիւններն իրենք իրենց
բացատրել չեն կարող, այլ աւելի բարձր և նա-
խընթաց մի բան են պահանջում և թէ աշ-
խարհքում բաներ կան, որոնք երբեք մեր
զգայութիւններին չեն ենթարկուի և ըմբռնե-
լի չեն լինի: Թէ ուրեմն «այն վարագուրի ե-
տեւ» որի առաջ պատմութեան ու բնութեան
թատերգութիւնն է տեղի ունենում մի ան-
տեսանելի պատճառ, խորհրդաւոր հեղինակի
Deus absconditus (անծանօթ Աստուած) կայ
ծածկուած: Մինչև իսկ այն մեթոդը, որի
միջոցաւ գիտութիւնը նոր հայեացքներ և նոր
ասպարէզներ է ձեռք բերել, հիմնուած է զա-
ղափարականութեան վերայ, քանի որ զաղա-
փարն է գիտնական հետազօտութեան մայ-
րը, և նոր ժամանակի գիտնականները՝ «կեան-
քի գիտութեան» նորագոյները, Կլօդ Բերնարդի
Դարվին, Պաստէօր, ոչ թէ երկարատեւ գիտո-
ղութեամբ կամ փորձերի ճշգրտութեամբ են
գործ կատարել, այլ համարձակ զաղափարնե-
րով և ծոխ տեսութիւններով: Լոկ իրողու-